**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/05»-1-Հ1**
**31.01.2025Թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/05»-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ «2024Թ-Ի ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «03» «ապրիլի» 2025թ.

«Հայփոստ» ՓԲԸ-ն՝ ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Շուշան Ալեքսանյանի և խորհրդի նախագահ Գևորգ Մելիքսեթյանի, որոնք գործում են կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն՝ ի դեմս գործադիր տնօրեն Վահե Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2025թ. հունվարի 31-ին կնքված N «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/05»-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը և «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից 2025 թվականի մարտի 27-ին հաստատած գնումների պլանը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.1 Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածը նոր խմբագրությամբ համաձայն՝ սույն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Հաստատել Պայմանագրի N 2 հավելվածը նոր խմբագրությամբ համաձայն՝ սույն Համաձայնագրի հավելված N 2-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը,

կազմված է 7 (յոթ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

«Հայփոստ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Սարյան 22
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930003703150100
ՀՎՀՀ՝ 02507464
Էլ.փոստ՝ gnumner@haypost.am
Հեռ.՝ (+374 10 514-514)

**«Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն՝**

______________________ **Շ.Ալեքսանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

«Հայփոստ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ՝

______________________ **Գ.Մելիքսեթյան**
(ստորագրություն)

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության 22, 5-րդ հարկ
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930014089990200
ՀՎՀՀ՝ 02586575
Էլ.փոստ՝ info@bakertillyarmenia.com
Հեռ.՝ (+37410 544-301/307 /309)

**Գլխավոր տնօրեն՝**

______________________ **Վ.Գևորգյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N*

*«03» «մարտի» 2025թ. կնքվա*

***N «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/05»-1-Հ1** ծածկագրով համաձայնագր*

*Հավելված N*

*«31» «հունվարի» 2025թ. կնքվա*

***N «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/05»-1** ծածկագրով պայմանագր*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 79211150/502 | Աուդիտորին ներկայացվող պահանջները /չափանիշները/<br>1. Ընկերությանը աուդիտորական ծառայություններ կարող են մատուցել բացառապես 5 /հինգ/ տարվա աուդիտորական աշխատանքի փորձ ունեցող աուդիտորական կազմակերպությունները: Ընդ որում, 5 /հինգ/ տարվա աուդիտորական աշխատանքի փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող (ըստ եկամտաբերության միջազգային լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների շարքից) աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպությունների վրա:<br>2. Ընկերությունը Աուդիտոր ընտրելիս առաջնորդվում է հետևյալ չափանիշներով.<br>2.1. Աուդիտորի ՀՀ-ում և/կամ միջազգային ճանաչում, բարձր հեղինակություն, բարի համբավ: Մասնավորապես՝ ըստ եկամուտների չափի միջազգային լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների ցանկում ընդգրկված կազմակերպությունները, որոնց ցանկը | դրամ | 10,080,000 | 1 | Ք.Երևան, «Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր գրասենյակ | Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 60 օրացուցային օր: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | հրապարակվում է Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում և տեղադրվում է http://www.accountancyage.com/static/top50-this-year, https://vault.com/best-companies-to-work-for/accounting/vault-accounting-25#rankings-group-0 կայքերից որևէ մեկում:<br>2.2. Բավարար ռեսուրսներ և ունակություն՝ իրականացնելու Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը՝ հաշվի առնելով Ընկերությունում իրականացվելիք պոտենցիալ աուդիտորական աշխատանքների ծավալը, բնույթը և վայրը:<br>2.3. Աուդիտորական խմբի, ներառյալ՝ Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորի՝ վճարահաշվարկային կազմակերպությունների աուդիտորական աշխատանքի իրականացման փորձ: Մասնավորապես՝ Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա վճարահաշվարկային կազմակերպությունների աուդիտորի 3 /երեք/ տարվա աշխատանքի փորձ, իսկ Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենան աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:<br>2.4. Աուդիտորական խմբի, ներառյալ՝ Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորի՝ միջազգային հաշվապահական որակավորում (Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ և այլն) կամ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված որակավորում ունեցող մասնագետների նվազագույն քանակի ապահովման հնարավորություն: Մասնավորապես՝ Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պարտադիր պետք է ունենա միջազգային հաշվապահական որակավորում, իսկ աուդիտ իրականացնող խմբում պետք է ներգրավված լինի նման որակավորում ունեցող առնվազն 1 /մեկ/ մասնագետ, ինչպես նաև Աուդիտորական խմբում | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենան միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորման փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ կամ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի (CAAA) կողմից տրված աուդիտորի որակավորում:<br>3. Աուդիտորական աշխատանքների ավարտից հետո Աուդիտի արդյունքների հիման վրա Աուդիտորը Պատվիրատուին ներկայացնում է ստորև նշված փաստաթղթերը.<br>• սույն պայմանագրով նախատեսված 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտորական եզրակացություն՝ հայերեն և անգլերեն լեզուներով,<br>• նամակ ղեկավարությանը նույն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հայերեն և անգլերեն լեզուներով,<br>• ներկայացնի առաջարկություններ և դիտողություններ հաշվապահական գրանցումների, հաշվառման համակարգերի և ներքին հսկողության մեխանիզմների վերաբերյալ, որոնք ուսումնասիրվել են աուդիտի ընթացքում,<br>• բացահայտի հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման ներկայացվող պահանջների խախտումների վերաբերյալ տեղեկությունները, հաշվապահական համակարգերի և ներքին հսկողության մեխանիզմներում դիտված կոնկրետ թերություններն ու թույլ կողմերը և ներկայացնի դրանց բարելավմանն ուղղված առաջարկություններ,<br>• ղեկավարության ուշադրությունը հրավիրի այն խնդիրների վրա, որոնք աուդիտորի | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեսանկյունից կարևոր են<br>• հարկային դիտարկում, աուդիտ և խորհրդատվություն:<br>4. Ավարտական հաշվետվության ներկայացման վերջնաժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 60 օրացուցային օր: | | | | | |

***ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորման համապատասխանություն*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայփոստ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Սարյան 22
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930003703150100
ՀՎՀՀ՝ 02507464
Էլ.փոստ՝ gnumner@haypost.am
Հեռ.՝ (+374 10 514-514)

**«Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն՝**

______________________ **Շ.Ալեքսանյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

**«Հայփոստ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ՝**

______________________ **Գ.Մելիքսեթյան**
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության 22, 5-րդ հարկ
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930014089990200
ՀՎՀՀ՝ 02586575
Էլ.փոստ՝ info@bakertillyarmenia.com
Հեռ.՝ (+37410 544-301/307 /309)

**Գլխավոր տնօրեն՝**

______________________ **Վ.Գևորգյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«03» «մարտի» 2025թ. կնքված
**N «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/05»-1-Հ1** ծածկագրով համաձայնագրի
Հավելված N 2
«31» «հունվարի» 2025թ. կնքված
**N «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/05»-1** ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 79211150/502 | 2024թ. ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտ (ներառյալ՝ հարկային դիտարկում) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | 10,080,000 | **10,080,000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
«Հայփոստ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Սարյան 22
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930003703150100
ՀՎՀՀ՝ 02507464
Էլ.փոստ՝ gnumner@haypost.am
Հեռ.՝ (+374 10 514-514)
**«Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն՝**
______________________ **Շ.Ալեքսանյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

**«Հայփոստ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ՝**
______________________ **Գ.Մելիքսեթյան**
(ստորագրություն)

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության 22, 5-րդ հարկ
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1930014089990200
ՀՎՀՀ՝ 02586575
Էլ.փոստ՝ info@bakertillyarmenia.com
Հեռ.՝ (+37410 544-301/307 /309)
**Գլխավոր տնօրեն՝**
______________________ **Վ.Գևորգյան**
(ստորագրություն)
Կ.Տ.